ազատեցար ի վանքներէն. և եկի բազում քաղաքաւ ընդ եզերը համատարած ծովն և լեզու բնաւ չի հասկանալ. բայց Բարէն թխտովն կու հարկէին։ Եւ ելաք ի քաղաք մի որ մեծ գետ կու գայր յեզրն ի վայր. 68 ակն կամուրջ էր կապած. և յանցեալ հասած մեծ Վիլվավ[38] և կեցայ անդ 3 յաւր։ Եւ ելեալ յանտի գնացի քսանեւեօթն յօր և հասա ամենօրհնեալ քաղաքն ի Կեթարիայ[39]. որ և մեծ հարկօք պատուեցին զմեզ. և կեցայ անդ եօթն յօր և գտեալ մեծ նաւ մի որ ասացին թէ ութսունհազար դանդար բեռն ունիմ, և աղաչեցի զիրիցանին թէ ասէք որ զիս այլ ի նաւն առնուն, այլ չեմ կարել քալել, անձինս տազարթն հատաւ։ Եւ նոքա կու զարմանային թէ զայս աշխարհս դու ո՛նց կացիր հետեւակ քալել. և գնացին գնաւ տէրն աղաչեցին մեզ. Այս հայ կարգաւորն ի նաւդ առէք, հեռու յաշխարհէ եկեալ է և չի կարել ցամաքով ի յետ դառնայ։ Կարդացին զՊապին թուխտն, որ լսեց և ասաց թէ կառնում ի նաւս, և ապա ասացէք դորայ որ գիտենայ որ ես համատարած ծովով կ'երթամ. իմ նաւս պազիրկեան չի մտներ. այս կատար մարդս որ կայ նաւիս ծառութիւորք են. մենք զմեր արեւուն թարկն տվեր ենք և Աստուած ապաւիներ. թէ նասիպս բերէ որ Աստուած ազատէ զմեզ որ բոլորենք զաշխարհսն՝ այլաւ?, և թէ չէ՝ նայ զայն Աստուած գիտէ. այլ ի հով ճար չունիմք գնալու, թէ դու այլ կամք ունիս՝ խիստ բարի. արեկ ի նաւս զհացդ ու զկերդ ու զխում մի՛ հոգալ. քո վարձքն այլ քեզ։ Այն կարգաւորքն՝ թէ մեք այլ հոգի ունինք զդորայ պաքսիմատն. և զինչ որ Աստուած պատրաստեալ է՝ մենք կու հոգանք։ Դարձան ի քաղաքն և ժամուն ատեն հասկացուցին ժողովրդեանն թէ այս հայ կարգաւորս ի նաւ կու մտէ. ձեր տղայոց արեւուն համար և ձեր հոգուտ իրենս ազիս ժողովեցէք։ Անչափ բարի բերին որ քանի շատ ուտէին չեր հատնիր։ Եւ մտաք ի նաւն Նոր Կիրակին երեքշաբթի օրն և վաթսունեւութ օր զաշխարհ բոլորեցաք և եկաք եզր աշխարհի քաղաքն յԱնդալուզիայ[40], եկաք ի ան քաղաքն որ ի մէջ ծովուն էր և կեցաք ի յան քաղաքն իններեւտասն յօր. զի մեծ ալեկոծութեան հասաք ու հանդիպեցաք, և կասարքն պատառեցաք, եկին այն տեղն շինեցին և ինքն խիստ գեղեցիկ քաղաք էր փոքրիկ և փառով ելինք։ Եւ այս տեղացս բաժանեցայ և գնացի ի Սանթամարիա Կատալուրն[41]. և անտից ի Սպիլիայ[42], որ զխաթունն տեսայ և յետ դարձայ։

Եւ ելեալ յանտից նաւովս և ութեւտասն յօրն եկեալ հասանք յաշխարհն Մաղրիպացոց, զի քամին ի դէմ էր և փուոթունայ էր. եկեալ ելան ի Սալաւպրունայ[43]. և ես այլ ի նաւ չիմտայ. ելայ կեցայ երեք օր և ելեալ միայն միայնակ ի Մաղրիպացոց մէջն ի ներս մեծ մի լեռ յանցայ որ երկու յօր ի կէսն եկի. և եկի ի Մաղրիպացոց թախտն ի Կրիտան[44] օր խաթուն էր առել մեծ և բարելի քաղաքն, և կեցայ մետասան օր, և ելեալ հինգ աւրն եկի ի մեծն Աճայէն[45] որ անդ էր մէկ դաստատակն Քրիստոսի. և եկեալ անտից ի Սպայիսայ[46]. և անտից յՈւլվիթայ[47] և յանտից ի Սանբստեֆան[48]. և յանտից ի Պուրդուս[49]. ասինչ ի Ընչիլայ[55] որ և ներք սեւ ցաւ եղայ և կեցայ հինգ յօր որ պարոնն հոքմն արաւ հաքիմն որ քիչ մի լաւցայ. և յանտից Ամանց[51], և անտից ի Ֆալատէզ[52], և ի Մութն[53] և անտի ի մեծն Սանդիւայ[54] որ էր քսանեւհինգ հազար տուն. և անդ կրկին հիւանդութիւն քաշեցի փորցաւ եղաւ, և այն կարգաւորքն մեծ սիրով ընդունեցան և ինձ ծառայութիւն արին մինչեւ որ առողջացայ. և ելեալ գնացի զիրար և անտից հնգետասան յօր հասայ ի մեծն Վաենցիայ[55] որ էր եօթանասուն հազար տուն, և կեցայ չորս օր. և յանտի գնացի ԻԱ աւրն ի մեծ քաղաքն Պարսալոն որ է իններսուն հազար տուն, և կեցայ վեց օր և անտից ի Բրբընիայն[56], և յանցեալ յաշխարն Կաղալին և գնացի զաւուրս ԼԳ և հասի յաշխարհն Ցիցիլային?. և անցեալ բազում քաղաքաւ յաշխարհն Ֆռանցօզաց զաւուրք բազումք յանցայ